ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԼԲԵՐՏԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԲ.00.02 Հանրային իրավունք (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2021

РОССИЙСКО-АРМЯНСКИЙ УНИВЕРСИТЕТ

ИСКАНДАРЯН ИЗАБЕЛЛА АЛЬБЕРТОВНА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА СВОБОДНЫЙ ВЫБОР ТРУДА В УСЛОВИЯХ РЫНОЧНЫХ ОТНОШЕНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право (конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление)

ԵՐԵՎԱՆ – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում

Գիտական ղեկավար՝	Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Խաչատրյան**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ.Ա. Տխաբիսիմովա** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Հ.Ա. Ստեփանյան**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի հունիսի 10-ին, ժամը 15:00-ին Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի նիստում (0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123): Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2021 թվականի մայիսի 1-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, իրավաբանական
գիտությունների թեկնածու՝ Ջ. Հ. Հայրապետյան

Тема диссертации утверждена в Академии государственного управления Республики Армения

Научный руководитель:	Доктор юридических наук, профессор **А. Г. Хачатрян**
Официальные оппоненты:	доктор юридических наук, профессор **Л.А. Тхабисимова** кандидат юридических наук, доцент **А. А. Степанян**
Ведущая организация:	**Образовательный комплекс полиции РА**

Защита состоится 10-го июня 2021 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).
С диссертацией можно ознакомиться в библиотеке Российско-Армянского университета. Автореферат разослан 1-ого мая 2021 года.

Ученый секретарь специализированного
совета, кандидат юридических наук Дж. А. Айрапетян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդիականությունը. Մարդկանց կյանքում աշխատանքն ունի տարբեր նշանակություն: Ոմանց համար այն ինքնազարգացման աղբյուր է, ոմանց համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներ լուծելու կամ սոցիալական կարգավիճակ ձևավորելու միջոց, այլոց համար՝ ստեղծագործելու հնարավորություն: Անկախ կյանքում աշխատանքի ունեցած դերից՝ աշխատանքը մարդու ինքնավարության և անկախության կարևորագույն երաշխիքներից է, ուստի աշխատանքի իրավունքի իրականացման հիմնահարցերը մշտապես ունեն առանցքային նշանակություն:

Ցանկացած իրավունքի գոյություն, որպես կանոն, պայմանավորվում է դրա անհրաժեշտությամբ: Մինչ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ նաև ՀՀ) 1995թ. Սահմանադրությունում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի ամրագրումը ՍՍՀՄ Սահմանադրությամբ (1978թ. ապրիլի 14-ին ընդունված ՍՍՀՄ սահմանադրության 38-րդ հոդված) աշխատանքն ազատ ընտրելը հանդիսանում էր աշխատանքի իրավունքի մի մասը և ենթադրում էր մասնագիտություն, զբաղմունքի և աշխատանքի տեսակ ընտրելու իրավունք՝ անհատի կոչմանը, ընդունակություններին, պրոֆեսիոնալ պատրաստվածությանը, կրթությանը համապատասխան և հաշվի առնելով հասարակական պահանջմունքները: Խորհրդային ժամանակաշրջանի պլանային տնտեսությունից հետո ազատ շուկայական հարաբերություններին անցնելով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրվել է աշխատանքի ազատ ընտրությունը՝ առանց աշխատանքի իրավունքի «բառացի» ճանաչման: Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել գիտական հետազոտության մակարդակով ուսումնասիրել, թե աշխատանքի ազատ ընտրությունն ինչ դեր է ստանձնել աշխատանքի իրավունքի երաշխավորման բացակայության պայմաններում, և ինչպիսի իրավական ակնկալիք կարող է ունենալ անհատը պետության հետ փոխհարաբերություններում:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ՀՀ 1995թ. Սահմանադրությունից ի վեր աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրական ամրագրումն երկու անգամ ձևափոխվել է, մասնավորապես կիրառվել են «աշխատանքի ազատ ընտրության իրավունք» և «աշխատանքի ընտրության ազատություն» եզրույթները, ինչպես նաև Սահմանադրության համապատասխան հոդվածներում կատարվել են բովանդակային փոփոխություններ: Դրանց ներքո աշխատանքի ազատ ընտրության իրավունքն ունի սահմանադրական համակարգային վերլուծության արդիականություն. հստակ չէ՝ աշխատանքի ընտրությունն իրավունք է, թե՝ ազատություն և յուրաքանչյուրի դեպքում, ինչպիսի վարվելակերպի կանոններ են ենթադրվում:

Թեմայի արդիականությունն ավելի ընդգծված նշանակություն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նոր իրավակարգավորումների լույսի ներքո (2015թ. փոփոխություններով): Հայաստանի Հանրապետությունում հռչակվել է սոցիալական շուկայական տնտեսություն, որն ի

թիվս շուկայական տնտեսության սկզբունքների, իր մեջ ներառում է նաև սոցիալական արդարությունն ու ընդհանուր տնտեսական բարեկեցությունը: Այս գաղափարներն ուղենիշ են համարվում պետության քաղաքականության, օրենսդրական և ենթաօրենսդրական մակարդակում սուբյեկտների իրավունքներն ու պարտավորությունները սահմանելու և միմյանց միջև փոխհարաբերությունները կարգավորելու համար և դրանց համատեքստում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի դերը հայկական իրավագիտության մեջ չի վերլուծվել:

Թեմայի գիտական մշակվածության աստիճանը. Սույն աշխատանքն իր բովանդակային առումով առաջինն է հայրենական իրավագիտության մեջ, որում խորը հետազոտության են ենթարկվել աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները սոցիալական շուկայական տնտեսության հարաբերություններում: Ազգային իրավագիտության մեջ ՀՀ անկախացումից ի վեր աշխատանքի ազատ ընտրության ոլորտում նման գիտական հետազոտություն չի իրականացվել, թեև աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի որոշ կողմեր քննարկվել են Գ. Պետրոսյանի գիտական հրապարակումներում: Ռուսական իրավագիտության մեջ աշխատանքի ազատ ընտրությունը հանդիսանում է աշխատանքի ազատության մի մասը, հետևապես ուսումնասիրվել և քննարկվել է աշխատանքի ազատության սահմանադրական ամրագրման ներքո Մ. Կրատենկոյի, Լ. Բուգրովի, Ա. Լուշնիկովի, Լ. Գինցբուրգի, Կ. Տոմաշեվսկու և այլոց աշխատություններում: Արևմտյան իրավագիտության մեջ, մասնավորապես՝ Հ. Քոլինզի, Վ. Մանթուվալուի Մ. Քրեյվնի, Գ. Մունդլակի տարբեր գիտական աշխատություններում աշխատանքի ազատ ընտրության իրավունքն ուսումնասիրվել և հետազոտվել է որպես աշխատանքի իրավունքի մի մաս:

Սահմանադրական դատարանների դատական փորձը, ներառյալ՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, ներկայացրել են Վ. Սադուրսկին, Լ. Սոլյոմը, Դ. Քյուրին, Ռ. Ալեքսին, Ա. Բարաքը, սոցիալական շուկայական տնտեսության հիմքում ընկած սկզբունքները լուսաբանված են Դ. Ռատկեի, Ս. Մուրեսանի աշխատություններում: Ի թիվս նշվածի, հետազոտության համար որպես տեսական հիմք ծառայել են աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի, հարակից այլ իրավունքների, դրանց իրացման հիմնախնդիրների վերաբերյալ գիտնականներ Գ. Դանիելյանի, Գ. Հարությունյանի, Վ. Այվազյանի, Ա. Մանասյանի գիտական աշխատանքները, ինչպես նաև սահմանադրական իրավունքի ու պետության և իրավունքի տեսության գիտության արդյունքները, որոնք աղերսվել են քննարկվող թեմայի հետ:

Հետազոտության օբյեկտը և առարկան. Հետազոտության օբյեկտ են հանդիսացել սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի կենսագործման ոլորտում ծագող հասարակական հարաբերությունները: Հետազոտության առարկան են աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի էությունը, բովանդակությունը, առանձնահատկությունները, իրավունքի իրացման և պաշտպանության հիմնախնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները. Ատենախոսության հիմնական նպատակն աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրականացման տեսագործնական հիմնախնդիրների գիտական ուսումնասիրության արդյունքում նշված իրավունքի էության բացահայտումն է, դրա տեսական ու գործնական իրավական կառուցակարգերի մշակմանն ու կատարելագործմանն ուղղված առաջարկությունների ներկայացումը:

Ատենախոսությունում առանձնանցվել են հետևյալ **խնդիրները՝**

- պարզել աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրորեն ամրագրումը կանխորոշող հանգամանքները ՀՀ-ում,
- բացահայտել աշխատանքն ընտրելու ազատության և աշխատանքն ազատ ընտրելու իրավունքի միջև հնարավոր տարբերությունները, ներկայացնել աշխատանքի ընտրության բովանդակությունը,
- վերհանել ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերի ներքո աշխատանքի ազատ ընտրության իրավունքի նորմատիվ բովանդակությունն ինչպիսի օրենսդրական փոփոխություններ է ենթադրում ՀՀ-ում,
- ներկայացնել սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում ինչ առանձնահատկություններ կարող է ունենալ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, և ինչպիսի զարգացման ուղի այն պետք է ունենա,
- պարզել, թե ինչ սահմանափակումների կարող է ենթարկվել աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, որոնք են այդ սահմանափակումների սահմանները, և ինչպես է աշխատանքի ազատ ընտրության իրավունքը հարաբերվում շուկայական սոցիալական տնտեսության հիմքում ընկած տնտեսական գործունեության ազատության հետ,
- ներկայացնել, թե ինչ առանձնահատկություն ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունքն այլ պետությունների օրենսդրությունում, և համեմատական վերլուծության արդյունքում ինչպիսի խնդիրներ կան կամ կարող են առաջանալ ՀՀ ներպետական օրենսդրությունում:

Հետազոտության մեթոդաբանական և տեսական հիմքը. Հետազոտությունում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ իրավագիտությանը հատուկ մեթոդները: Ընդհանուր գիտական մեթոդներ են հանդիսացել համընդհանուր դիալեկտիկական, պատմական և տրամաբանական մեթոդները: Որպես հատուկ մեթոդներ կիրառվել են իրավա-համեմատական, համակարգային-կառուցվածքային, ձևական-իրավաբանական, լեզվատրամաբանական մեկնաբանման, համակարգային վերլուծության մեթոդները:

Հետազոտության համար որպես տեսական հիմք ծառայել են աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի, հարակից այլ իրավունքների, դրանց իրացման հիմնախնդիրների վերաբերյալ տարբեր գիտական աշխատությունները, ինչպես նաև սահմանադրական իրավունքի ու պետության և իրավունքի տեսության գիտության արդյունքները, որոնք աղերսվել են քննարկվող թեմայի հետ:

Մասնավորապես, ատենախոսության համար տեսական հենք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների՝ Գ. Դանիելյանի, Գ. Հարությունյանի, Վ. Այվազյանի, Գ. Պետրոսյանի, Ա. Մանասյանի, Ռ.Ալեքսիի, Ա. Բարաքի, Հ. Քոլինզի, Վ. Մանթուվալուի, Վ. Սադուրսկիի, Յ. Մորսինկի, Մ. Քրեյվնի, Դ. Քյուրիի, Գ. Մունդլակի, Լ. Բուգրովի, Կ. Տոմաշեվսկու և այլոց աշխատությունները:

Հետազոտության իրավական և փորձառնական հիմքերը. հիմք են հանդիսացել միջազգային և ներպետական իրավական ակտերը, միջազգային կազմակերպությունների գործունեության արդյունքում ստացված մեկնաբանությունները, ամփոփումները, առաջարկությունները և եզրակացությունները: Մասնավորապես, միջազգային պայմանագրերից գործածվել են Մարդու իրավունքների մասին համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիան, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը և այլն, իսկ ներպետական իրավական ակտերից՝ ՀՀ Սահմանադրությունը, աշխատանքի և զբաղվածության ոլորտը կարգավորող օրենսգրքերն ու օրենքները, ՀՀ Կառավարության ծրագրերը և այլն:
Հետազոտության փորձառնական հիմք են հանդիսացել աշխատանքի ազատ ընտրության սահմանադրաիրավական պաշտպանության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի դատական պրակտիկայի նյութերը, Ֆրանսիայի, Գերմանիայի, Լեհաստանի, Հունաստանի սահմանադրական դատարանների դատական պրակտիկայի նյութերը, 1961թ. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի՝ Սոցիալական Կոմիտեի եզրակացությունները, Տնտեսական, Սոցիալական և Մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագրի նկատմամբ հսկողություն իրականացնող հարցերով Կոմիտեի առաջարկություն-մեկնաբանությունները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտերը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքը սոցիալական շուկայական տնտեսական կարգի սկզբունքների ներքո համակարգված կերպով ուսումնասիրվել է առաջին անգամ, արդյունքում վերհանվել են աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի տեսական հիմնադրույթներ, կատարվել եզրահանգումներ, իրավունքի իրականացման համար գործնական գաղափարներ ու առաջարկություններ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրացիայի ժամանակակից գործընթացների և որպես տնտեսական կարգի հիմք սոցիալական շուկայական տնտեսության հռչակման սահմանադրական կարգավորման համատեքստում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրավական բովանդակությունը վերահմաստավորվում է այդ իրավունքի

իրականացումը բնութագրող հետևյալ հատկանիշների ամբողջությամբ ու նշանակությամբ, որ՝ **ա)** աշխատանքի/զբաղմունքի ընտրությունն անհատի կողմից կյանքն իր ձևով հեղինակելու ինքնուրույնությունն է, որը պետք է երաշխավորվի հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքով, **բ)** աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման հիմքում ընկած են յուրաքանչյուր ոքի տնտեսական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքների ներդաշնակ երաշխավորումը:

2. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական գործընթացների ու նորմերի համակարգային վերլուծության արդյունքներով բացահայտվել է, որ «աշխատանքի ազատ ընտրության իրավունք»-ը և «աշխատանքի ընտրության ազատություն»-ը գործածվում են որպես նույնիմաստ եզրույթներ և արտահայտում աշխատանքի ազատության գաղափարը: Մինչդեռ աշխատանքի իրավունքի և ազատության բացահայտումներով հիմնավոր է համարվել այն մոտեցումը, որ աշխատանքի ազատությունն աշխատանքի իրավունքի մի մասն է, ինչից բխում է, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունք և աշխատանքի ընտրության ազատություն եզրույթները պետք է արտահայտեն նաև աշխատանքի իրավունքի բովանդակությունը: Հետևապես կարևորվել է այն գաղափարը, որ աշխատանքի ընտրությունը՝ որպես աշխատանքի ազատության ու աշխատանքի իրավունքի միասնական արտահայտություն, հանդիսանում է քաղաքացիական ազատություն ու սոցիալ-տնտեսական իրավունք, մի դեպքում դրսևորվելով իր՝ **ա)** ներքին նեգատիվ բովանդակությամբ, այն է՝ արգելվում է ստրկությունը, հարկադիր և պարտադիր աշխատանքը, շահագործվող աշխատանքը մյուս դեպքում՝ **բ)** պոզիտիվ բովանդակությամբ, որը պայմանավորված է, օրինակ, աշխատանք փնտրելու, աշխատանքի անցնելու հնարավորություններով, այդ թվում՝ մասնագիտական ուսուցման ու վերապատրաստման ծառայությունների, աշխատանքում առաջխաղացման հավասար հնարավորությունների առկայությամբ, ինչպես նաև աշխատանքից անհիմն ազատվելու ու ապրուստի միջոցից անհիմն զրկվելու արգելքներով, գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանությամբ և այլն:

3. Աշխատանքի իրավունքի արդյունավետ իրականացումը պայմանավորված է այդ իրավունքին ներկայացվող հետևյալ պահանջների առկայությամբ՝ **ա)** ապրուստը վաստակելը (սեփականություն) և ինքնազարգացումն աշխատանքի իրավունքի իրականացման նպատակ է, **բ)** աշխատանքի ազատ ընտրությունը պետք է ապահովի ապրուստ վաստակելուն և ինքնազարգացմանը նպատակաուղղված գործունեությունը: Աշխատանքի իրավունքը չի հանդիսանում պետությունից աշխատանք պահանջելու անհատի սուբյեկտիվ իրավունք:

4. Սոցիալական շուկայական տնտեսական կարգի հիմքում ընկած՝ մի կողմից տնտեսական գործունեության ազատության ու մրցակցության, մյուս կողմից որպես հասարակության համերաշխության գրավական սոցիալական

արդարության ու ընդհանուր տնտեսական բարեկեցության հավասարակշռման կազմակերպչական-իրավական որոշակի կառուցակարգերը հուշում են, որ աշխատանքային հարաբերություններում մրցակցելու ունակությունն ու հնարավորությունը սոցիալական շուկայական տնտեսությունում անհատի համար աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման անմիջական գործիքներ են և դրանց դրսևորման շրջանակներն են աշխատուժի ազատ տեղաշարժը, աշխատանքի արդյունքում ստեղծված կամ ստացված բարիքների անարգել տնօրինումը, աշխատանքային պայմանների բարելավման մասով որոշումներ կայացնելու իրավական հնարավորությունը, աշխատանքում իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, աշխատանք չունենալու դեպքում սոցիալական աջակցության ակնկալումը:

5. Աշխատանքի ազատ ընտրության իրավունքը ներառում է ինչպես բուն աշխատանքի/զբաղմունքի տեսակի ընտրությունը, այնպես էլ ընտրված աշխատանքով/զբաղմունքով զբաղվելու և աշխատանքը/զբաղմունքը կորցնելու դեպքում անհատի պաշտպանությունը: Համապատասխանաբար, աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացումն ունի հետևյալ փոխկապակցված փուլերը, որոնցից յուրաքանչյուրն ուղեկցվում է խտրականության արգելքով և արդյունավետ պաշտպանությամբ՝ ա) աշխատանքի/զբաղմունքի ձեռքբերում, որը ներառում է աշխատանքի անցնելու, զբաղմունք ձեռք բերելու համար անհրաժեշտ կրթություն/ մասնագիտացում ստանալու իրավունքը, աշխատանքի տեղավորման ծառայություններից օգտվելու իրավունքը, աշխատանքներ ստեղծելուն և պահպանելուն ուղղված պետական քաղաքականությունը, բ) աշխատանքում/զբաղմունքում ազատության պահպանում, որն իր մեջ ներառում է հարկադիր և պարտադիր աշխատանքի արգելքը, աշխատանքի վարձատրության իրավունքն ու վարձատրությունը տնօրինելու անհատի ազատությունը, աշխատանքում անձնական կյանքի իրավունքը, աշխատանքային առաջխաղացման իրավունքը, գ) աշխատանքի պաշտպանություն, որն իր մեջ ներառում է աշխատանքը/զբաղմունքն առանց հիմնավոր և օրինական պատճառի չկորցնելու իրավունքը, աշխատանքը/զբաղմունքը կորցնելու դեպքում դատական և արտադատական պաշտպանությունը՝ այդ թվում կրած վնասների հատուցումը, սոցիալական ապահովության իրավունքը:

6. Բացահայտելով աշխատանքի ազատ ընտրության իրավունքի բովանդակության հիմքում ընկած աշխատանքի ազատության և աշխատանքի իրավունքի փոխլրացնող տարրերի միասնությունը՝ հիմնավորվում է, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն ազատ գործելու ընթացակարգային հնարավորությունների՝ ի դեմս աշխատելու և չաշխատելու ազատության և աշխատանքում խտրականության արգելքի, այլև բովանդակային հնարավորությունների տիրույթում՝ որտեղ անձի ազատ ընտրությունը ֆորմալ հնարավորությունից կվերածվի նաև կարողության՝

բովանդակային հնարավորության, ինչը բխում է սոցիալական շուկայական տնտեսության կառուցվածքի մաս հանդիսացող՝ սոցիալական ապահովության պահանջից:

7. Սահմանադրության 57-րդ, 75-րդ, 76-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներով ամրագրված դրույթների համակարգային վերլուծության համատեքստում հիմնավոր է համարվել, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքն ի թիվս Սահմանադրության 76-րդ նախատեսված՝ արտակարգ կամ ռազմական դրության պայմաններում ժամանակավորապես կասեցվելու և սահմանափակվելու հիմքերի, կարող է ենթարկվել սահմանափակումների նաև ոչ ռազմական և ոչ արտակարգ դրության պայմաններում, չնայած որ Սահմանադրության 57-րդ հոդվածով նշված չեն այդ իրավունքի սահմանափակման հիմքեր: Սահմանափակումը տեղի է ունենում օրենսդրական մակարդակում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման կապակցությամբ սահմանագծեր անցկացնելիս և այլոց իրավունքների կամ ազատությունների հետ հարաբերելիս՝ իրավունքների հավասարակշռման ընդհանուր կանոնների և համաչափության ու որոշակիության սկզբունքների զուգորդմամբ:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը.

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքն ու դրա իրացման հիմնախնդիրներն իրավունքի տեսության կողմից չեն ենթարկվել խորքային տեսական վերլուծության: Սույն ատենախոսության մեջ ձևակերպված տեսական դրույթները և եզրահանգումները թույլ են տալիս բացահայտել և լուծել մի շարք հիմնախնդիրներ, որոնք որոշակիորեն կնպաստեն պետության և իրավունքի ընդհանուր տեսության, իրավունքի պատմության և իրավագիտության առանձին բաժինների զարգացմանը: Այս տեսանկյունից ատենախոսության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ գիտական հետազոտության առարկա է դարձել աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքն ու դրա իրացման հիմնախնդիրներն սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում, միևնույն ժամանակ բացահայտվել են խնդրո առարկայի վերաբերյալ եղած հակասություններն ու բացերը, դրանք շտկելու համար մշակվել են մի շարք առաջարկություններ, որոնք ունեն ոչ միայն տեսական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության գործնական նշանակությունը պայմանավորված է նաև նրանով, որ դրա արդյունքները կարող են կիրառվել գիտահետազոտական գործունեության ընթացքում, իրավաստեղծ և իրավակիրառական բնագավառներում՝ այդ թվում քաղաքականություն մշակող մարմինների և իրավապաշտպանների համար, դատական պրակտիկայում, ինչպես նաև սահմանադրական իրավունքի, աշխատանքային իրավունքի դասընթացների, դասախոսությունների, սեմինարների և իրավակիրառ մարմինների համապատասխան վերապատրաստման դասընթացների ժամանակ: Աշխատանքը կարող է օգտակար լինել նաև իրավաբանական գործունեության վերաբերյալ հետագա ուսումնասիրություններ կատարողների և պրակտիկ աշխատողների համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը. Ատենախոսությունը պատրաստվել է Հայ-Ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնում: Թեկնածուական ատենախոսական աշխատանքի առավել կարևոր դրույթներն իրենց արտացոլումն են գտել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը. Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք ներառում են վեց ենթագլուխներ, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը, խնդիրները, ատենախոսության մեթոդաբանական, տեսական, իրավական, փորձարարական հիմքը, գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության տեսագործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը և ատենախոսության կառուցվածքը:

Առաջին գլխում (Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի պատմաիրավական և տեսաիրավական հիմնահարցերը) ուսումնասիրվել են աշխատանքի ազատ ընտրության իրավունքի տեսաիրավական հիմնահարցերը: Անդրադարձ է կատարվել աշխատանքի իրավունքի, աշխատանքի ազատության պատմական ձևավորմանը, դրանց հիմքում ընկած սոցիալ-տնտեսական զարգացումներին, քննարկվել են աշխատանքի ընտրության ազատության և աշխատանքի ազատ ընտրության իրավունքի փոխկապակցվածությունը և տարբերությունները:

Երկրորդ գլխում (Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի միջազգային իրավական կարգավորումները) ուսումնասիրվել են մի շարք երկրների սահմանադրական դատարանների փորձը՝ կապված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի հետ, ինչպես նաև Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին կոնվենցիայի ներքո այս իրավունքին առնչվող մեկնաբանություններն ու դատական նախադեպերը:

Երրորդ գլխում (Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրաիրավական կարգավորումը) ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրաիրավական բովանդակությունը, և սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքների հաշվառմամբ նշվել են աշխատանքի ազատ ընտրության իրավունքի զարգացման հիմնական ուղղությունները:

Եզրակացության մեջ ամփոփ տրվում են հետազոտության հիմնական արդյունքներ, որոնք ներկայացվում են ստորև.

1. Աշխատանքի իրավունքն ու ազատությունը փոխկապակցված են և ծառայում են անհատի զարգացմանը: Եթե չկա աշխատանք, ապա աշխատանքի ազատությունը սին գաղափար է: Եթե կա աշխատանք, սակայն անհատն ազատ չէ դրան կամ դրա այս կամ այն կողմերին համաձայնելու կամ չհամաձայնելու, դրանով զբաղվելու հարցում, ապա աշխատանքն առնվազն որպես անհատի ինքնազարգացման աղբյուր կորցնում է իր նշանակությունը:

2. Աշխատանքի իրավունքի պատմահրավական և տեսահրավական հիմքերի վերլուծությամբ աշխատանքի իրավունքն իր մեջ ներառում է նաև աշխատանքի ազատությունը: Աշխատանքի իրավունքն ունի հետևյալ նորմատիվ ուղղությունները՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքի արգելքը, աշխատանքից անհիմն ազատելու արգելքը, աշխատանքում խտրականության արգելքը, աշխատանքում ինքնահրացումը, շահագործման արգելքը, աշխատանքով ապրուստ վաստակելու՝ այսինքն վարձատրվելու իրավունքը, աշխատանքից զրկվելու դեպքում դրա հիմնավորվածությունը բողոքարկելը, աշխատանքի տեղավորման ծառայություններից օգտվելու իրավունքը, աշխատանքի անցնելու համար մասնագիտական կրթություն և մասնագիտական ուղղվածություն ստանալու իրավունքը, արհեստակցական միություններ ստեղծելու իրավունքը, արհեստակցական միությունների ազատ գործունեությունը, աշխատանքը կորցնելու դեպքում գործազրկությունից պաշտպանությունը, աշխատանքային հարաբերություններում աշխատողի անձնական կյանքը հարգելը, սոցիալական ապահովության իրավունքը:

3. Անհատի ինքնավարությունն աշխատանք/զբաղմունք ընտրելու, դրանով զբաղվելու հարցում հանդիսանում է աշխատանքի իրավունքի իրականացման մի մասը: Աշխատանք է հանդիսանում ոչ միայն գործատուի հետ աշխատանքային պայմանագրով կատարվող աշխատանքը, այլ նաև անձին զբաղվածություն ապահովող զբաղմունքի այլ տեսակները:

4. Անձի ազատ ձեռնարկելու, ձեռնարկատիրական և տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքն աշխատանքն ազատ ընտրելու իրավունքի դրսևորումներից է, միևնույն ժամանակ աշխատանքի ընտրությունը նաև դրանով զբաղվելու ազատություն է, ուստի ձեռնարկատիրական գործունեության օրենսդրական կարգավորումները կարող են սահմանափակել աշխատանքի/զբաղմունքի ընտրության ազատությունը: Տարբերակվում են աշխատանքի ազատ ընտրությունը և ընտրված աշխատանքով զբաղվելու ազատությունը սահմանափակելու սուբյեկտիվ և օբյեկտիվ չափանիշներ: Սուբյեկտիվ չափանիշներով սահմանվում են աշխատանք ընտրելու համար անհրաժեշտ որակավորումների և գիտելիքների պահանջները, իսկ օբյեկտիվ չափանիշները վերաբերում են աշխատանքով զբաղվելուն, պետք է բխեն բացարձակ անհրաժեշտությունից ու օբյեկտիվ՝ անհատի անձնական հատկություններով չպայմանավորված հանգամանքներից:

5. ՀՀ Սահմանադրությամբ աշխատանքի ազատ ընտրության իրավունքին հաղորդված է սկզբունքորեն ընտրություն կատարելու հնարավորություն, ինչը չի հանգեցնում անձին աշխատանքով ապահովելու պետության պարտավորության:

Սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքների հաշվառմամբ աշխատանքի ազատ ընտրության իրավունքը պետք է դիտարկվի որպես աշխատանքի իրավունքի մի մաս, այլապես առանց աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների, աշխատանքի ազատ ընտրության իրավունքը կարող է հավասարեցվել անձի ազատ գործելու իրավունքին և խտրականության արգելքին: Բացի այդ, օրենսդրական մակարդակում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման կառուցակարգերն անհրաժեշտ է մշակել սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքների ներքո, աշխատողի և գործատուի փոխհարաբերությունները դարձնել ճկուն և ապահովել աշխատուժի ազատ տեղաշարժի մեխանիզմներ, ինչպես նաև ապահովել աշխատանքի ազատ ընտրության իրավունքի պաշտպանության հասանելիություն և արդյունավետություն, իրավունքի հասցեատերերի իրազեկվածություն:

6. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածում նշված են աշխատանքի էական պայմանները՝ աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը: Աշխատանքի ազատությունը, հետևապես նաև ազատ ընտրության տրամաբանությունն, ենթադրում է, որ կողմերը կարող են գալ համաձայնության որոշ պայմաններ էական համարելու շուրջ: Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի արդյունավետ իրականացման նկատառումներից ելնելով՝ առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածում էական պայմանների ցանկում հատուկ ներառել նաև կողմերի գրավոր պայմանավորվածությամբ էական համարված այլ պայմանները, ինչը հնարավորություն կտա աշխատողին օգտվել էական պայմանների փոփոխության հետ կապված օրենսդրի նախատեսած երաշխիքներից:

7. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1. հոդվածով սահմանված խտրականության արգելքի գործնական կիրառումն ապահովելու նկատառումներից ելնելով անհրաժեշտ է՝

ա) աշխատանքային օրենսգրքում հատուկ արմրագրել, որ պետք է բացառվեն աշխատանքային կամ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերում կամ կազմակերպությունների ներքին ակտերում հավասար վերաբերմունքի սկզբունքին հակասող դրույթները,

բ) վարչական պատասխանատվության միջոցներ նախատեսել գործատուների նկատմամբ, երբ աշխատանքային կամ կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերում կամ կազմակերպությունների ներքին ակտերում, աշխատանքի հայտարարություններում ներառվել են աշխատողների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքին հակասող դրույթներ, թեկուզև այդպիսի դրույթները չեն խախտել մարդու և քաղաքացու իրավունքներն ու օրինական շահերը,

գ) լրացնել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը և հատուկ պատասխանատվություն սահմանել խտրական վերաբերմունք ցուցաբերելու դեպքերի համար՝ մանրամասնելով խտրականության տեսակները և նախատեսելով պատասխանատվության համաչափ կանխարգելիչ միջոցներ,

դ) ստեղծել անկախ մարմին, որը հատուկ կզբաղվի աշխատանքի շուկայում խտրական վերաբերմունքի արժանացած անձանց իրավաբանական օգնություն ցուցաբերելով:

8. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով նախատեսված է աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին վեճերով գործերի քննության կարգը, և ապացուցման բեռը դրված է պատասխանողի վրա բոլոր այն դեպքերում, երբ վիճարկվում է անհատական իրավական ակտը: Հաշվի առնելով, որ գործատուն խտրական վերաբերմունք ցուցաբերել կարող է նաև առանց անհատական իրավական ակտ կայացնելու՝ անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով նախատեսել ապացուցման բեռի բաշխում գործատուի վրա աշխատանքային հարաբերություններից ծագած այն վեճերի դեպքում, երբ վիճող կողմը վկայակոչում է իր նկատմամբ կիրառված խտրական վերաբերմունքի մասին:

9. Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման տեսանկյունից կարևոր է, թե աշխատանքից անհիմն զրկվելու դեպքում ինչպիսի պաշտպանություն է նախատեսվում: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված հատուցման չափը /հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար միջին աշխատավարձը կամ աշխատավարձի տարբերությունն այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում աշխատողը կատարել է նվազ վարձատրվող աշխատանք, սակայն ոչ ավել քան միջին աշխատավարձի տասներկուապատիկը/ թույլ չի տալիս, որ իրավունքը խախտված աշխատողը ստանա պատշաճ հատուցում և սահմանափակում են աշխատողի՝ հարկադիր պարապուրդի ընթացքում իրեն հասանելիք աշխատավարձից բացի կրած ոչ նյութական վնասները պահանջելու իրավունքը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածն ի թիվս միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով հատուցման պետք է նախատեսի նաև ոչ նյութական վնասների հատուցում:

10. Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է իրավունքի պաշտպանության մեխանիզմների կատարելությունից: Այդ կապակցությամբ արհմիությունները, պետք է իրավունք ունենան գործել և բողոք բերել խտրականության վերաբերմունքի արժանացած անձի անունից: Ներկայիս իրավակարգավորումներով /ՀՀ աշխատանքային օրենսգրքի 25-րդ հոդված, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված/ աշխատողների ներկայացուցիչները կարող են բողոքարկել գործատուի գործողությունները և պետական մարմիններին միջնորդագրեր ներկայացնել, ինչը միության անդամի անունից դատարան հայց ներկայացնելու իրավասություն չի: Նշվածի հաշվառմամբ, անհրաժեշտ է «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 19-րդ և Քաղաքացիական դատավարության մասին ՀՀ օրենսգրքի 49-րդ հոդվածներով արհեստակցական

միության համար հստակ նախատեսել արհեստակցական միության մասնակցի (անդամի) անունից դատարան դիմելու իրավասություն:

11. Գործազրկության նպաստ ստացողների հարկադիր աշխատանքը բացառելու նպատակով ՀՀ օրենսդրությամբ / «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 26-րդ հոդվածներ և ՀՀ Կառավարության կողմից «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» 2014 թվականի ապրիլի 17-ին ընդունված թիվ 534-ն որոշման Հավելված 2/ գործազրկության նպաստ ստացող և աշխատանք փնտրող անձի համար նախատեսված «հարմար» աշխատանքի չափանիշներում անհրաժեշտ է նշել, որ աշխատանքը չի կարող համարվել այդպիսին, եթե այն՝

ա) պահանջում է զգալիորեն ավելի ցածր որակավորումներ, քան աշխատանք փնտրող անձն ունի, կամ

բ) պահանջում է ֆիզիկական և մտավոր առողջության որոշակի մակարդակ, ինչը տվյալ անհատն այդ պահին չունի, կամ աշխատանքն անվտանգ չէ և անհամատեղելի է աշխատողի արժանապատվության և ինտեգրման հետ, կամ

գ) վարձատրվում է ավելի քիչ, քան աշխատանք փնտրող անձի ունեցած նախորդ աշխատանքը, կամ առհասարակ տվյալ ոլորտի համար ընդունված աշխատավարձի շեմը, կամ էլ ցածր է անձին տրամադրվող բոլոր նպաստների հանրագումարից, կամ

դ) համահունչ չէ աշխատողի ընտանեկան պարտականությունների հետ:

12. ՀՀ միջազգային պարտավորություններից է հանդիսանում ունենալ աշխատանքային իրավունքների պաշտպանության արտադատական մարմիններ, որոնք բացի պետական և մասնավոր ոլորտի գործատուների կողմից աշխատանքային իրավունքների իրականացման նկատմամբ հսկողություն իրականացնելուց և խախտումները վերհանելուց, պետք է իրավասու լինեն միջոցներ սահմանել խախտված իրավունքները վերականգնելու համար: Ներկայումս նշված գործառույթներով մասնակիորեն օժտված է ՀՀ առողջապահական և աշխատանքի պետական տեսչական մարմինը, որն իր առջև դրված նպատակների և ունեցած լիազորությունների հաշվառմամբ լիարժեք վերահսկողական մարմին չէ, իսկ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված վերահսկողություն իրականացնող լիազոր տեսչական մարմինն օժտված չէ աշխատողների խախտված իրավունքների վերականգնման կամ փոխհատուցման լիազորություններով: Անհրաժեշտ է դիտարկել աշխատանքային իրավունքների նկատմամբ հսկողություն իրականացնող պետական մարմիններին խախտված իրավունքները վերականգնելու նպատակով պաշտպանության միջոցներ սահմանելու իրավասությամբ օժտելը:

13. Աշխատուժի ազատ տեղաշարժը բխում է չաշխատելու ազատությունից, այսինքն՝ երբ աշխատողը զրկված չի չաշխատելու իր իրավունքից: Աշխատանքային պայմանագրերում հակամրցակցային դրույթներ սահմանելը սահմանափակում է աշխատողի ազատ աշխատանքային տեղաշարժը: Թեև ինքնին հակամրցակցային

դրույթներ սահմանելը հակաօրինական չէ, սակայն այն կարող է մի կողմից չարաշահվել գործատուի կողմից, մյուս կողմից աշխատողի՝ իր իրավունքների թերի իմացության կամ աշխատանքային իրավունքների պաշտպանության ոչ արդյունավետ ընթացակարգերի պատճառով երբևէ չվիճարկվել: Աշխատանքային օրենսդրությամբ հակամրցակցային դրույթների կարգավորում և ընդունելիության չափանիշներ նախատեսելն աշխատողների համար կստեղծի մի աշխատանքից մեկ այլ աշխատանքի տեղափոխվելու կանոնների իրավական կանխատեսելիություն:

14. Պետության անմիջական պարտավորությունների մեջ է մտնում տնտեսվարող սուբյեկտներին պարտադրել վարելու մարդու իրավունքների իրականացման պատշաճ ուսումնասիրություն, որպեսզի կանխարգելվեն վերջիններիս կողմից, ինչպես նաև վերջիններիս մատակարարող շղթաներում և ենթակապալառուների, մատակարարների, վստահորդների կամ այլ գործընկերների մոտ Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով սահմանված իրավունքների, որոնց թվին է պատկանում նաև աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, չարաշահումները: Հաշվի առնելով, որ ՀՀ օրենսդրությունում չկա նման իրավակարգավորում, առաջարկվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանել այն:

15. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 97-րդ հոդվածով ֆիզիկական անձի համար սահմանված է հնարավորություն (որոշակի բացառություններով) ազատվել բոլոր դրամական պարտավորությունների կատարումից: Մինչդեռ սնանկ ճանաչված ֆիզիկական անձի սնանկության համար հիմք հանդիսացած բոլոր չկատարված պարտավորություններն են արգելք դառնում անհատ ձեռնարկատեր դառնալու համար, քանի որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված է, որ որպես անհատ ձեռնարկատեր չի կարող հաշվառվել սնանկ ճանաչված այն ֆիզիկական անձը, որը դիմում տալու պահին չի կատարել սնանկ ճանաչելու համար հիմք հանդիսացած իր պարտավորությունները: Նման լայն և առանց տարբերակման իրավակարգավորումը սահմանափակում է սնանկ ճանաչված ֆիզիկական անձանց աշխատանքն ազատ ընտրելու իրավունքը և չի բխում իրավական որոշակիության սկզբունքից: Այդ կապակցությամբ առաջարկվում է «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված արգելքը չտարածել սնանկ ճանաչված՝ պարտավորությունների կատարումից արդեն իսկ ազատված ֆիզիկական անձանց նկատմամբ:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում՝

1. «Աշխատանքի ընտրության և աշխատանքի իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները. պատմատեսական ակնարկ և իրավական-համեմատական վերլուծություն», «Արդարադատություն» գիտական հանդես, N5 (40), 2017թ., էջեր 44-48,
2. «Աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքը Վերանայված Եվրոպական Սոցիալական Խարտիայի համատեքստում», «Հանրային կառավարում» գիտական հանդես, N 5, 2018թ., էջեր 158-164,
3. «Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի ազատ ընտրության սահմանադրական իրավունքի իրացման հիմնախնդիրները ՄԱԿ-ի Տնտեսական, Սոցիալական և Մշակութային իրավունքների մասին դաշնագրի խորապատկերում», Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ, Գիտակրթական միջազգային կենտրոն, «Նաիրի», 2018թ., էջեր 98-106,
4. «Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանադրական ամրագրման հիմնահարցերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի տրամաբանության շրջանակում», «Արդարադատություն» գիտական հանդես, N 2 (48), 2019թ., էջեր 15-19,
5. «Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական վերլուծությունը», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, N 1-2 (247-248), 2020թ., էջեր 32-41,
6. «Աշխատանքի ազատ ընտրության որոշ իրավական հարցեր միջազգային փորձի ներքո»,«Արդարադատություն» գիտական հանդես, N 2 (51), 2020թ., էջէր 30-35,
7. «Սոցիալական շուկայական տնտեսության պայմաններում աշխատանքի ազատ ընտրության իրավունքի բովանդակության որոշ հիմնահարցեր», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, N 3-4 (249-250), 2020թ. էջեր 20-28:
8. «Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի շարունակական բնույթի իրավական հիմքերի վերլուծություն», «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, N 3-4 (261-262), 2021:

ИСКАНДАРЯН ИЗАБЕЛЛА АЛЬБЕРТОВНА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ОСУЩЕСТВЛЕНИЯ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА НА СВОБОДНЫЙ ВЫБОР ТРУДА В УСЛОВИЯХ РЫНОЧНЫХ ОТНОШЕНИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – Публичное право. Защита состоится 10-го июня 2021 года в 15:00 часов на заседании специализированного совета 063 по Юриспруденции ВАК РА при Российско-Армянском университете (0051, г. Ереван, ул. Овсепа Эмина 123).

РЕЗЮМЕ

Труд имеет разное значение в жизни людей. Для одних - это источник саморазвития, для вторых - способ решения жизненно важных проблем, для третьих - способ образования социального статуса, возможность творить и так далее. Независимо от роли труда в жизни, одной из самых важных гарантий автономии и независимости человека является возможность работать и свободно выбирать свою работу. Данное исследование посвящено раскрытию содержания права свободного выбора труда в социальной рыночной экономике, выявлению проблем его реализации и совершенствованию существующих структур. Актуальность исследования обусловлена поправками к Конституции 2015г., провозглашением принципов социальной рыночной экономики, а также наличием различных определений права свободного выбора труда в постсоветский период. Задачами исследования являются изучение сущности данного права, выявление необходимых для реализации права элементов путем установления принципов, лежащих на основе социального рыночного экономического строя.

В исследовании затрагиваются историко-правовые, теоретико-правовые основы права на труд, свободы труда, выбора труда в контексте права на труд и свободы труда, было выделено конкретное внутреннее содержание права на свободный выбор труда и свободы выбора труда, связанные с особенностями гражданских свобод и социально-экономических прав. Право на свободный выбор труда было изучено в соответствии с тремя основными международными договорами /Международный пакт 1966г. об экономических, социальных и культурных правах, Европейская социальная хартия пересмотренная в 1961г., Европейская конвенция о защите прав человека и основных свобод 1950г., а также был изучен конституционный опыт стран, закрепивших право на труд или свободу труда, свободу выбора труда.

В исследовании систематически представлены нормативные направления права на труд, элементы права на свободный выбор труда, был сделан вывод о том, что закрепление права на труд или права на свободный выбор труда в Конституции не приводит к обязательству государства обеспечивать занятость лица, и что выбор работы включает свободу заниматься выбранной им работой, а также то, что она в некоторой степени совпадает с

правом человека свободно заниматься предпринимательской или экономической деятельностью. Представляя нормативные направления права на труд подчеркивается непрерывная сущность права на свободный выбор труда и обсуждатеся соотношение права на свободный выбор труда с правом на труд и со свободой труда, значимость выбора и его практическое влияние на работу. В результате делается вывод о том, что эффективность реализации права на свободный выбор труда зависит от реализации определенных трудовых прав работника, поэтому действие права на свободный выбор работы распространяется на правовые отношения начинающиеся с поиска работы до увольнения работника. В работе рассмотрены вопросы конституционно-правового регулирования ограничений права на свободный выбор труда, обсуждены конституционные прямые и косвенные основания для ограничения права и выявляно, что данное право может быть ограничено, несмотря на то что закрепляющей конституционной нормой не предусмотренны специальные основания для его ограничения.

Наряду с описанием внутренних конституционных положений о праве на свободный выбор труда, обсуждены правовые возможности выбранной профессии /занятость, что позволило локализовать либеральную роль права на свободный выбор в существующих нормах конституционного регулирования, с другой стороны оспаривать эту роль. Таким образом, представляя принципы, лежащие в основе социальной рыночной экономики, была предпринята попытка проанализировать их возможное влияние на право свободного выбора труда, и основная идея в этой связи состоит в том, что в рамках права на свободный выбор труда "выбор" имеет формалистическую логику, в результате которого право на свободный выбор труда может по существу быть приравнено к праву на свободу действий человека и запрету дискриминации. В этой связи было предложено толковать право на свободный выбор труда как осуществление права на труд и был представлен комплекс тех прав, эффективность реализации которых определяется эффективностью реализации права на свободный выбор труда.

В исследовании были выявлены необходимость и тенденции в развитии права на свободный выбор труда. Они приводят к пяти основным направлениям: толкование права на свободный выбор труда с учетом содержания права на труд, разработка структур для реализации права на свободный выбор труда в соответствии с принципами социальной рыночной экономики, гибкость взаимоотношений работника и работодателя на законодательном уровне и механизмы свободного передвижения рабочей силы, отражение обязательств, взятых на себя Республикой Армения по международным договорам, во внутреннем законодательстве относительно права на свободный выбор труда, а также доступ к защите права на свободный выбор работы и ее эффективность, осведомленность адресатов данного права. В исследовании представлены направления, требующие правового регулирования, а в некоторых случаях предложены поправки и дополнения к действующему законодатльству в виде правовой нормы.

IZABELLA ALBERT ISKANDARYAN

MAIN PROBLEMS OF REALIZATION OF THE CONSTITUTIONAL RIGHT TO FREE CHOICE OF EMPLOYMENT IN MARKET REALTIONS

Competition for the degree of Candidate of Juridical Sciences is the speciality of 12.00.02 - Public Law. The defence of the dissertation is scheduled for 10 June, 2012, at 15:00 in a panel session of the Professional Council 063 of Jurisprudence of Russian-Armenian University of the RA Higher Certification Commission (123, H. Emin, Yerevan, 0051)

SUMMARY

The labour plays various roles in life. For some people it is a source of self-development, for others it is a way to solve vital problems, some others develop social status by their world, for the others it is an opportunity to create, etc. Regardless of the roles of labor, it is one of the serious guarantees of a person's autonomy and independence, so that the latter has the opportunity to work and choose the work freely. This research is dedicated to revealing the content of the right to free choice of employment in a social market economy, to identifying the cornerstones of its implementation, and to improving the existing structures. The contemporaneity of the research is conditioned by the Constitutional amendments of 2015 in RoA, by the proclamation of the principles of social market economy, by the existence of various legal definitions of the right to free choice of employment in the post-Soviet period. The objectives of the research are to study the essence of this right, to identify the necessary elements to exercise the right in accordance with the principles underlying the social market economic order.

The research touches upon the historical and legal bases of right to work, freedom of work, the choice of work in the context of right to work and freedom of work, the internal content between the right to free choice of employment and the freedom to choose an employment related to civil liberties, socio-economic rights which are linked to the peculiarities of civil liberties and socio-economic rights. The right to the free choice of employment was studied under the three main international treaties / International Covenant on Economic, Social and Cultural Rights of 1966, the Revised European Social Charter of 1961, the European Convention on Protection of Human Rights and Fundamental Freedoms of 1950, the constitutional experience of countries having enshrined the right of work, freedom of work, free choice of work.

The study presents in a systemized way the normative directions of the right of work, the elements of the right of free choice of work, a conclusion is made that the enshrinement of the right of work or the right of free choice in the constitution does not lead to the obligation of the state to provide employment,

that the choice of work coincides to some extent with the right of a person to entreprein freely, to engage in entrepreneurial-economic activity. Having the normative directions of the right to work in place, the study explores further the continuing nature of the right to free choice of employment. In this connection, the correlation of the right to free choice of work with the right to work and freedom of work, the significance of making a choice and its practical impact on employment is presented. It concludes that the efficient exercise of the right to free choice of employment depends on the exercise of certain employment rights of the employee, so the right to free choice of employment extends to legal relations starting from job seeking to dismissal of an employee.The study also explores the legal regulation of constituional limitations of the right to free choice of occupation, discusses direct and indirect limitations and concludes that this right may be limited even though no special basis for limitation is enshrined in the constitutional norm for the free choice of employment.

Along with the description of the domestic constitutional regulations on the right to free choice of employment, the legal possibilities of the chosen occupation/employment have been dwelled on, which on the one hand allowed to localize the liberal role of the right to free choice of employment within the frames of the existing constitutional regulations, on the other hand to challenge that role. Thus, by presenting the principles underlying the social market economy, an attempt has been made to analyze their possible impact on the right of free choice of employment and the main essence in this regard is that the "choice" in the right of free choice of employment has got a formalistic logic, as a result of which the right to free choice of employment can be essentially equated with the right of a person to act freely and to the prohibition of discrimination. The research outlined the need and trends in the development of the right to free choice of employment, with five main directions: interpretation of the right to free choice of employment, taking into account the content of the right to work, development of structures for the exercise of the right to the free choice of employment under the principles of social market economy, reflection of the obligations in the domestic legislation on the right of free choice of employment, such as access to the protection of the right, efficiency, awareness of the addressees of the right. The research presented the directions that need legal regulation and in some cases specific regulations in the form of a legal norms have been proposed.